

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՄԻՄՖԵՐՈՊՈԼ, Պ. Առաքել Նալբանդեանին: Ձեր լողաձի իմաստը սա է, որ Թիֆլիսում կամ Պոլսում մի մասնաժողով կազմելի՝ արևելեան և արևմտեան գրական լեզուներէջ մի ընդհանուր հակական գրական-դպրոցական լեզու ստեղծելու համար: Ձը տպեցինք լողաձի, համարելով այդ առաջարկը անգործնական:

ԹԱԻՐԻՋԻ ԼԻՂԱԽԱ Թադի Հալոց երկուս դպր. հոգաբարձութիւնը «խնդրում է ռուսահայ բարեմիտ պարոններէջ, որ յոքա ըստ չափու կարեաց նպաստեն զանազան գրքերով դպրոցի աղքատիկ գրադարանին, որը նիւթական միջոցների ուղղութեան պատճառով զոհուում է աննախանձ վիճակի մէջ»:

Ս. ՇԱՀԱՋԻՋԻ ՅՕՐԵԼԵԱՆԸ, «Մուրճ»-ի անցեալ №-ում մինք հաղորդեցինք որ պ. Սմբատ Շահաղիզեանի լոբելեանը Մոսկւայի հասարակութիւնը մտադիր է տօնել Ջատիկ տօներին: Այժմ մինք ստանում ենք լոբելեանը կարգադրող լանձնաժողովից հետեւեալ տպագրած գրութիւնը.

«Ներկայ 1892 թ. լրանում է լալոնի բանաստեղծ Սմբատ Շահաղիզեանի ուսուցչութեան երեսնամեակը. այդ առիթով Մոսկւայի հայ հասարակութիւնը վճել է առաջիկայ ապրիլի 9-ին տօնել նորա մանկավարժական և գրականական գործունէութիւնը:

Կարգադրիչ լանձնաժողովը հրաւիրում է բանաստեղծի տաղանդը չարգոյններին և վաղեմի աշակերտներին մասնակցել այդ տօնախմբութեանը:

Ուղերձներ, շնորհաւորական նամակներ և հեռագիրներ կարելի է ուղարկել լանձնաժողովի անդամ պ. Յովհաննէս Տէր-Յակոբեանին հետեւեալ հասցէով. Москва, Покровка, Дякинъ пер., д. Струве.

Օգտւում ենք ղէպից հաղորդելու, որ Թիֆլիսի Հալոց Հրատարակչական Ընկերութիւնը պատրաստում է պ. Շահաղիզի բանաստեղծական բոլոր գրածները զոգայ մէջ և «Լեռնի վիշտը» պոէմայի նոր տպագրութիւնը:

ԿԱՐԱՍՈՒ-ԲԱԶԱՐ, հալոց դպրոցին, Սխալմամբ ուղարկւած Ան-ի տեղ
ուղարկւեց ներկալ թւ. № 1.

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 1. Երես 20 տպւած է՝ ներկալ 1891 թւականին,
պէտք է լինի՝ Անցեալ 1891 թւականին, «Երուսաղէմի պա-
տերի առաջ» ոտանաւորի մէջ երես 78 տող 11 տպւած է՝ բա-
ւան չեն քեզ, ուղիղն է՝ բաւական չեն քեզ:

Երաժշտական նկատողութիւնների մէջ երես 163, տող 9
վերևից տպւած է՝ աւելի համարձակ ուղիղնէ՝ աւելի համարձակին:

Պ. Շոռամպֆի նամակում՝ երես 173, տող 10-դ ներքևից
տպւած է՝ պտտասխանում է, ուղիղն է՝ պտտրաստում է մի
աշխատութիւն:

Խմբագրութեան կողմից բաժնում երես 177, տող 18
վերևից տպւած է՝ Վարդաղեան փլիլպպոս, պիտի լինի՝ Վար-
դաղարեան փլիլպպոս:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ, «Մուրճ» № 1 տպւած «Կաթողիկոսական
թիկնածունքը» լծւածում վիշատակւած էին Խրիմեանից շնոր
չորս ալ անուններ, որոնք, մեր, որպէս ասել էինք՝ Թերի
տեղեկութիւնների համեմատ, կարող էին «Մուրճ»-ի տեսակէտից
տեղ բռնել կաթողիկոսական թիկնածունքի քառանուն ցանկի
մէջ. Այդ անուններից տաճկահայերից «Մուրճ»-ը վիշել էր եր-
կուսին՝ Մատթէոս եպ. Խզմիրլեանին և Գրիգորիս եպ. Ալէաթ-
ճեանին, Մեր ալս ամսում ստացած տեղեկութիւնների համե-
մատ, եթէ խնդիր լինի ալդ երկուսի համար, դերադասութիւն
պէտք է տալ Գրիգորիս եպ. Ալէաթճեանին, որը ճանկաստանի
կարող և արդիւնաւէտ եկեղեցականներից մէկը լինելով Խրի-
մեանական գոյն կրող ցուցակում աւելի դրական իրաւունք ունի
տեղ բռնելու:

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԳԱԶԱՐԵԱՆՑ